ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 սեպտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Արմինե Բասմաջյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջի մասին, թիվ ՎԴ/2987/05/20 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 23-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Արմինե Բասմաջյանը 2020 թվականի մայիսի 14-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ պահանջելով ոչ իրավաչափ

ճանաչել 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) և վերացնել դրա հետևանքները:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2020 թվականի մայիսի 21-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Արմինե Բասմաջյանի ներկայացուցիչը 2020 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմումը հստակեցնելու վերաբերյալ դիմում՝ պահանջելով ոչ իրավաչափ ճանաչել Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) և վերացնել դրա հետևանքները՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի հիման վրա ՀՀ, ք.Երևան, Կենտրոն, Կոնդի փողոց, թիվ 51/3 հասցեում գտնվող բաժնային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի՝ Արամայիս Բասմաջյանին պատկանող 1/4 բաժնի նկատմամբ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին Հրաչյա Բասմաջյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը և դրան հաջորդող մնացած այլ հետևանքները վերացնել:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ Արմինե Բասմաջյանի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցապահանջը հստակեցնելու վերաբերյալ դիմումը ընդունվել է վարույթ:

5. ՀՀ վարչական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

6. 2022 թվականի սեպտեմբերի 9-ին սույն վարչական գործը վերամակագրվել է ՀՀ վարչական դատարանի դատավոր Աղասի Դարբինյանին:

7. ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ վարչական գործն ընդունվել է վարույթ:

8. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ վարչական գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

9. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

10. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի սեպտեմբերի 7-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

11. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածին և 221-րդ հոդվածի 4-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԱՐԴ1/0019/02/13 գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ վարչական գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(...) Արմինե Արամայիսի Բաամաջյանի հայցի առարկան՝ հոր՝ Արամայիս Բաամաջյանի մահից հետո՝ վեց ամսվա ընթացքում, վերջինին պատկանած գույքերին՝ գորգին, ոսկյա շղթային, մատանուն, թևնոցին և ակորդեոնին փաստացի տիրապետման եղանակով իր կողմից Արամայիս Բաամաջյանի ժառանգությունն ընդունած ժառանգ հանդիսացած լինելու հանգամանքը հաշվի չառնելու հիմքով նոտարի կողմից Արամայիս Բաամաջյանին պատկանած՝ ք.Երևան, Կոնդի փողոց, թիվ 51/3 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/4 մասի վերաբերյալ երրորդ անձ Հրաչյա Բաամաջյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր տալուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելն է, ուստի, Դատարանի գնահատմամբ, քննության առարկա հայցապահանջը, ըստ էության, ժառանգման իրավահարաբերություններից բխող՝ ժառանգությունն ընդունելու և ժառանգության զանգվածի կապակցությամբ վեճն է, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ սույն վեճը վերաբերում է ոչ թե հանրային*

իրավահարաբերություններին, այլ մասնավոր, այն է՝ ժառանգության հետ կապված իրավահարաբերություններին, և ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, որպիսի հանգամանքը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի ուժով, հիմք է գործն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու համար:

Ինչ վերաբերում է հայցվորի ներկայացուցչի կողմից 03.08.2023 թվականին Դատարան մուտքագրված դիրքորոշմանը, ապա, Դատարանն արձանագրում է, որ դրանում նշված փաստարկներով սույն վարչական գործի հիմքում ընկած վեճի բնույթը չի փոխվում, ավելին՝ դրանով ժառանգությունն ընդունելու հնարավոր սուբյեկտների շրջանակն է ընդլայնված նշվում, ինչով ևս հիմնավորվում է, որ սույն վարչական գործի հիմքում ընկած վեճը ժառանգման իրավահարաբերություններից բխող՝ ժառանգությունն ընդունելու և ժառանգության զանգվածի կապակցությամբ վեճն է»[1]:

12. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 26-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ և 77-րդ հոդվածներին, 78-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին, 81-րդ հոդվածին և 221-րդ հոդվածի 4-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ արձանագրել է . *«(…) Հայցվորը, դիմելով վարչական դատարան խնդրել է կատարված նոտարական գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ և վերացնել դրանց հետևանքները: Որպես հիմնավորում հայցվորը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-1217-րդ հոդվածները, ինչպես նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները, ներկայացված հայցադիմումով հայտնել է, որ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ն.Սարգսյանի կողմից Արամայիս Բաամաջյանի ժառանգության հետ կապված գործը վարելիս թույլ են տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների խախտումներ, մասնավորապես, հայցվորը մատնանշել է, որ նոտարը Արամայիս Բաամաջյանի ժառանգությունը բացելիս ժառանգության իրավունքի վկայագիր է տվել վերջինիս երկրորդ հերթի ժառանգ հանդիսացող*

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 36-39:

անձանց՝ անտեսելով այն հանգամանքը, որ գոյություն ունի առաջին հերթի ժառանգ, այդ թվում՝ նոտարը Հրաչյա Բաամաջյանի ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր տալու իրավասություն չունենալու պայմաններում տվել է այդ վկայագիրը՝ դրանով իսկ խախտելով օրենսդրական պահանջները:

Հայցվորի պնդմամբ նոտարը կատարել է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն և չեն համապատասխանել օրենքի պահանջներին և ոչ պատշաճ վարչարարության արդյունքում խախտվել են հայցվորի իրավունքները:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատարանի՝ վարչական գործը վերահասցեագրելու մասին որոշման մեջ որպես պատճառաբանություն նշված այն հանգամանքին, որ վեճը ժառանգման իրավահարաբերություններից բխող՝ ժառանգությունն ընդունելու և ժառանգության զանգվածի կապակցությամբ վեճն է, Դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնական պահանջը վերաբերում է ժառանգության ձևակերպման ժամանակ նոտարի կողմից կատարված գործողությունների իրավաչափությանը, իսկ ժառանգությունն ընդունելու և ժառանգության զանգվածի հետ կապված հարցերը դրանք հիմնական պահանջից ածանցվող հարցեր են:

Տվյալ դեպքում, հայցադիմումի ուսումնասիրությունից երևում է, որ հայցվորը վիճարկում է հենց նոտարի գործողությունները՝ դրանք համարելով ոչ իրավաչափ և օրենքին հակասող այնպես, ինչպես և այդ գործողությունների արդյունքում կայացված նոտարի որոշումը ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր տալու մասին, ինչի կապակցությամբ և հայցվորը դիմել է դատարան ոչ թե հիշյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով՝ ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճ առկա լինելու պատճառաբանությամբ, այլ դիմել է դատարան նոտարի՝ ժառանգության իրավունքի վկայագիր տալու մասին որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով՝ նոտարի գործողությունները ոչ իրավաչափ լինելու հիմքով»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 47-49:

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/2987/05/20 գործն ըստ հայցի՝ Արմինե Բասմաջյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

14. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (…)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (…)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (…)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

15. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0830/05/14 որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

16. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն*

---

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»[4]*:*

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

17. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել նոտարական գործողությունների իրականացման կարգը և ժառանգական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերին:

18. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1215-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *«Ըստ օրենքի ժառանգները ժառանգման են հրավիրվում սույն օրենսգրքի 1216-1219 հոդվածներով սահմանված հերթականությամբ:*

Յուրաքանչյուր հաջորդ հերթի ժառանգները ժառանգության իրավունք են ձեռք բերում նախորդ հերթի ժառանգների բացակայության, նրանց ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու դեպքերում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), սույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա»:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է սույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն սույն օրենքով:*

Նոտարը նոտարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր գրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով: (...) »:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան»:*

Նշված օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Նոտարն իրականացնում է հետևյալ նոտարական գործողությունները.*

(...) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են՝ նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը (...)»:*

19. Ժառանգության իրավունքի վկայագիրը դատական կարգով վիճարկելու առանձնահատկություններին Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել *Հուսիկ Թադևոսյանն ընդդեմ Արմեն Արիստակեսյանի, ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտար Անժելա Ցականյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԱՐԴ1/0019/02/13 որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Ե]թե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ապա այդ գործը չի ծագում հանրային իրավահարաբերություններից, այլ ծագում է մասնավոր իրավահարաբերություններից, հետևաբար ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին»*[5]:

20. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Արմինե Բասմաջյանը 2020 թվականի մայիսի 14-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հուսիկ Թադևոսյանն ընդդեմ Արմեն Արիստակեսյանի, ՀՀ Արմավիրի նոտարական տարածքի նոտար Անժելա Ցականյանի* թիվ ԱՐԴ1/0019/02/13 քաղաքացիական գործով 2015 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը:

լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջների մասին[6],

- ՀՀ վարչական դատարանը վարչական գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն վարչական գործի հիմքում ընկած վեճը ժառանգման իրավահարաբերություններից բխող՝ ժառանգությունն ընդունելու և ժառանգության զանգվածի կապակցությամբ վեճ է, ուստի այն բխում է մասնավոր իրավահարաբերություններից և ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[7],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական չեն, և սույն դեպքում հայցվորը վիճարկում է հենց նոտարի գործողությունները՝ դրանք համարելով ոչ իրավաչափ և օրենքին հակասող[8]:

21. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-19-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք Արմինե Բասմաջյանի կողմից ներկայացված հայցի պահանջի հիմքում դրված է նոտարական գործողությունների վիճարկումը, թե ոչ: Այսպես՝ Արմինե Բասմաջյանը հայցի փաստական հիմքում վկայակոչել է հետևյալը. *«(…) [Ս]ույն գործով պատասխանող՝ «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար Նունե Սարգսյանն իրավունք չուներ (իրավասու չէր) Հրաչյա Կոլյաի Բասմաջյանին տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր իմ հոր՝ Արամայիս Բասմաջյանի Անշարժ գույքի վերաբերյալ, սակայն տվել է տվյալ լրացուցիչ վկայագիրը, որով էլ խախտել է վերոնշյալ իրավական նորմերի պահանջները և կատարել է ոչ իրավաչափ նոտարական գործողություն: (…)*

Պատասխանող՝ «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար Նունե Սարգսյանը նախ իրավունք չուներ ժառանգման հրավիրել երկրորդ հերթի ժառանգի, ինչպես նաև՝ իրավունք չուներ (իրավասու չէր) և պետք է մերժեր Հրաչյա Բասմաջյանի ըստ օրենքի

---

[6] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 12-րդ կետը:

ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի տրամադրումը (իմ հոր՝ Արամայիս Բասմաջյանի Անշարժ գույքի վերաբերյալ), սակայն տվել է տվյալ լրացուցիչ վկայագիրը, որով էլ խախտել է վերոնշյալ իրավական նորմերի պահանջները և կատարել է ոչ իրավաչափ նոտարական գործողություն»:

22. Այսպիսով՝ Արմինե Բասմաջյանի հայցի առարկան 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) ոչ իրավաչափ ճանաչելը և դրա հետևանքները վերացնելն է, իսկ հայցի փաստական հիմքը՝ նոտարի կողմից ըստ օրենքի ժառանգներին ժառանգման հրավիրելու համար օրենքով սահմանված հերթականության խախտումը, և ըստ այդմ՝ ժառանգի կողմից ժառանգության ընդունման իրավաչափությունը չստուգելն է: Այսինքն՝ տվյալ պարագայում ժառանգության իրավունքի վկայագիրը վիճարկվում է նոտարի գործողությունների՝ ոչ իրավաչափ լինելու հիմքով, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

23. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/2987/05/20 գործն ըստ հայցի՝ Արմինե Բասմաջյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

24. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Արմինե Բասմաջյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/2987/05/20 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/2987/05/20 գործն ըստ հայցի՝ Արմինե Բասմաջյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին կատարված նոտարական գործողությունը (ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրի (նոտարական ակտի կոդ՝ 437-20191002-84-4211242) տրամադրումը) ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ